Doi: 10.56737/2953-7843-2025.10-32

Տ. ՇԱՀԵ ՔԱՀԱՆԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՄՈՎՍԵՍ Գ. ՏԱԹԵՒԱՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ՂԱՋԱՐ ԳՐԻՉԸ (ՆՎԻՐՎԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀՄՐ. 1278 ՁԵՌԱԳՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ 400 ԱՄՅԱԿԻՆ)

Սկիզբը՝ թիվ Ժ.

*Մովսես Տաթեւացին Հայաստանի տարբեր վայրերում հիմնում է դպրատներ[1], գրատներ[2]։ Ժամանակակիցները նրան նմանեցնում են, թե՛ Ներսես Մեծին եւ թե՛ Սահակ Պարթեւին[3]։*

---

[1] *Մայր ցուցակ, հտ. Գ., Երեւան, 2007, էջ 683–696։ Տե՛ս նաեւ՝ Մայր ցուցակ, հտ. Ը., Երեւան, 2013, էջ 50. «Աւրհնութիւն ի քաղուածք տօնից եւ տէրունականաց եւ ամենայն սրբոց, զոր սահմանեաց սուրբ հայրապետն Մովսէս ի փառս Աստուծոյ – ԳԿ. Երգեցէք որդիք Սիոնի...»։*

[2] *Մայր ցուցակ, հտ. Դ., Երեւան, 2008, էջ 302–310, (1631 թ.). «Փառք... Արդ, ի թվին Հայոց ՌՁ. (1631) եւ յունվարի ԻԸ. (28), ի հայրապետութեան Հայոց Մեծաց Սուրբ էջմիածնայ Տեառն տէր Մովսէս ընտրեալ եւ սրբբասնեալ կաթողիկոսի, այլ եւ քաջ պվէտիկոս տիեզերալոյս բաբունապետի, որ լուսափայլ բանիւ պայծառացոյց զազգս Հայոց։ Եւ զարդարոց եկեղեցիս նորոգելով բազում եւ յոլով վանորայս եւ մենաստանս, նաեւ զայրս եւ զփապարս լերանց, զդաշտս եւ զանտառս ծաղկեցոյց կուսակրօն ճգնաւորօք եւ սուրբ միանձացելովք, մաքուր կուսանօք եւ աստուածահաճոյ անապատաւորօք։ Որովք հաստատեն կարգք է. (7) սանմահի ժամատեղաց, գրատունք եւ ժամակարգութիւնք, ի փառս Տեառն Աստուծոյ, եւ ի թագաւորութեան Լեհաց աշխարհին՝ Երրորդ Զիկմունդին, ի տիրախնամ եւ աստուածապահ մայրաքաղաքն Լէվ, զոր յայսմ ամի եկն ի ձէհ նուիրակ //(121բ) տէր Խաչատուր արի եւ քաջ բաբունապետն, ի տեառն տէր Մովսէս կաթողիկոսէ...»։*

[3] *Մայր ցուցակ, հտ. Ե., Երեւան, 2009, էջ 1053–1062. «Վասն զի յառաջ քան զսա սրբազան եւ երջանիկ հայրապետն Մովսէս, որ էր ի Սիսական նահանգեան, համեմատ գտանեալ ամենայնիւ արդիս, զոր ոչ ոք կարասցէ ըստ քանիսնութեան նորա արտավիպել, եւ զի է քեզ կալչիք նպատակ զՊարթեւն Սահակ կամ զՄեծն Ներսէս, ըստ բնութեան բարուցն, ըստ մաքրութեան կենացն, ըստ ուղղութեան ընթացից, ըստ առաւելութեան արդեանցն ի վերայ ազգիս, եւ ըստ այլոց ամենայնի։ Սա երիցս չոգաւ առ թագաւորն Պարսից եւ յոյժ սիրեցաւ ի նմանէ, որով եւ ազատեաց զԱթոռս մեծ ի դիմոսական հարկաց ծայրագունից, որ յանուղղագործ առաջնորդեաց ազգիս՝ մտեալ //(542բ) էր։ Սա ի ներքոյ չարագոյն լծոյն այնորիկ խափեալ, եբարձ զայն երջանիկս դէտ շնորհօքն Քրիստոսի։ Եւ զկնի այնորիկ սկիզբն արար ի մաքրել զսա յաղբեւսից բազմակուտից, լայնանիստ պարսպօք բոլորեաց եւ զերից կողմանց շինուածսն աւարտեաց, որ ինչ միանգամ ըստ հարկութեան եւ ըստ պատշաճաւորեա պիտոյանար քարիւ եւ կրով կարծրակառոյց ամրութեամբ։ Նաեւ զկմբէթ Մեծի տաճարիս ի բաց առեալ Շքեղացոյց, քանզի էր խարխալեալ եւ կարի նիստ։ Եւ յետ այնորիկ եղեւ զրաւ կենաց իւրոց, Փոխեցաւ աստուստ յանմահական կեանսն ի հազարերորդ ութներորդ երկրորդ (1633) թուականերոյ, գոլով վաթսուն ամաց, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս եւ ամիս ըստ ամացն։ Իսկ զկնի երանելւոյն փոխանորդեաց աշակերտ նորին՝ տէր Փիլիպպոս*

*1631 թվականին Վաղարշպատում գաղափարվում է մեկ այլ ձեռագիր որտեղ գնահատականի խոսք է ուղղվում իշխող կաթողիկոսին, դարձյալ նմանեցնում են Ներսես Մեծին, ինչպես նաեւ Մովսես Քերթողին[4]։*

*Մովսես Տաթեւացին էջմիածնում «լուսարար» լինելու ժամանակաշրջանում գույքագրում է մատենադարանի ձեռագրերը[5]։*

*Մեզ հայտնի՝ Մովսես Տաթեւացու ձեռամբ գաղափարված առաջին ձեռագիր մասունքը գրված Եղեսիայում, զբաղեցնում է ՄՄ 745 ձեռագրահամարը եւ թվագրվում է 1607 թ., երբ նա ուսանում էր Սրապիոն կաթողիկոսի մոտ մինչեւ նրա մահը[6]։ Սա է պատճառը, որ նրան կոչել են նաեւ՝ Ուռհայեցի։ Սույն ձեռագրի գրչության ընթացքում ննջում է Սրապիոն կաթողիկոսը եւ իր հավատարիմ աշակերտը՝ Մովսես Տաթեւացին ծանր տանելով ուսուցչի մահը, հոգու խորքից ողբեր է ձոնում նրա հիշատակին։ Տարբեր ձեռագրերում ամփոփված ողբի մասունքները Ն. Ակինյանը ամբողջացրել եւ համադրելով ի մի է բերել էջմիածնի, Երուսաղեմի եւ Շավարշ վարդապետ Սահակյանի գրի առած տարբերակները զետեղելով Մովսես Տաթեւացուն նվիրված մենագրության մեջ[7]։ Հայտնի է, որ Մովսես Տաթեւացին նվիրատվություն է կատարել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքին[8]։*

*Ժամանակակիցների հույսն այնքան մեծ է եղել առ Մովսես Տաթեւացին, որ կենդանության օրոք իսկ, նրա մասին հյուսել են տաղեր[9]։*

---

*դիտապետն, զորմէ նախաճառեցաք...»։ Տե՛ս նաեւ՝ Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ հտ. Գ., էջ 5–6։*

*[4] Մայր ցուցակ, հտ. Ա., Երեւան, 1984, էջ 303–306, ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Ա., էջ 699։*

*[5] Մայր ցուցակ, հտ. ԺԱ., Երեւան, 2024, էջ 1373. Կնքադրոշմ՝ 35բ սեւ թանաքով բոլորակ վերին մասում Քրիստոսի պատկերով «[Յիսուսի Քրիստոսի / ծառ]այ/ [Մո]վսէս վարդապետ ի/ Վիճակ Ստաթէի» (հմմտ. ձեռ. 8061, Կոնդակ, Խոսքը Մովսէս Գ. Տաթեւացու մասին է, այս մասին տե՛ս Ա. Յարութիւնեան, Երեւանի Ս. Անանիա առաքեալի անապատը կամ Ջորաւոր Ս. Աստուածածին եկեղեցին, Երեւան, 2020, էջ 64–74)։*

*[6] ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Բ., էջ 407։*

*[7] Ն. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի, էջ 409–424։*

*[8] Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. երրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1967, էջ 186–187. «Աստուած ողորմի Տաթեւացի Տէր Մովսէս գրոց աշակերտին, որ Ա. արծաթի բուրվառ ետուր ի Սուրբ Երուսաղէմ, ի դուռն Սուրբ Յակոբայ։ Աստուած ողորմի Տաթեւացի Տէր Մովսէս վարդապետին հոգոյն, որ Ղուկաս եպիսկոպոսն ընդ իւր Բ. մեծ արծաթի կանթեղ բերին, Ա. պատանատեղաց, Ա. Սրբոյ Յակոբայ աւագ խորանին, Ա. Արծաթի բուրվառ, Ա. արծաթի բաժականոց, Ա. արծաթի խնկատուփ, ԺԱ. պղնձէ բուրվառ, թվին ՌԿԲ. (1631) բերին ի Սուրբ Երուսաղէմ, Աստուած իւրեանց փոխարէնն հատուցանէ ի միւսանգամ գալուստն. Ամէն»։*

*[9] Մայր ցուցակ, հտ. Գ., Երեւան, 2007, էջ 523–530, Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի Ա. հատորում խորագրված է. «Մովսիսի կաթողիկոսի Տաղ գովասանական*

*Կաթողիկոսի մահից շատ չանցած գիտական ճշգրտությամբ փորձեր են արվում վերականգնելու Մովսես Տաթեւացու կյանքի գործունեության պատմությունը. «Բայց սակայն զսրբոյ եւ զամենաերջանիկ առն Աստուծոյ զտեառն Մովսէսի կաթողիկոսի զվարսն եւս համառօտ բանիւ կամիմք յայտ առնել։ Էր սա յերկրէն Սիւնեաց։ Ի տիս մանկութեան սրբասէր եւ աղօթարար եւ պահեցող, հեզ եւ հանդարտ բարուք։ Որ եւ յարեցաւ ի մեծ կաթողիկոսն Սրապիոն, անհանգիստ երկամբ աշխատեալ ընթերցումն Աստուածաշունչ տառից, եւ յետ մահուան կաթողիկոսին ընկալաւ իշխանութիւն ի գաւազան ի Գրիգոր վարդապետէ Կեսարացւոյ։ Եւ ըստ շնորհելոյ նմա յԱստուծոյ յորդառատ վարդապետութեամբ եւ բարի քաղաքավարութեամբ լուսաւորեաց զազգս հայկազեան, եւ արար բազում ուղղութիւնս։ Նախ, զի զերծեալ կարգս եկեղեցւոյ, որ ի թուլութենէ առաջնոցն խանգարեալ էր, վերստին ուղղեաց։ Երկրորդ. ի բազում տեղիս յանապատս կարգեաց խարազնազգեաց ճգնաւորաց, արանց եւ միանգամայն եւ կանանց։ Յոր ժողովեցան՝ ուր քսան եւ երեսուն, ուր վաթսուն եւ եւթանասուն, զի անդադար աղօթեսցեն, եւ ինքն որպէս զհայր հասարակաց խնամ տանէր ամենեցուն զմարմնաւոր պէտս նոցա ընլով։ Երրորդ. յամենայն տեղիս՝ ի շէնս եւ յաւանս անթիւ եկեղեցիս շինեաց եւ քահանայս կարգեաց, որով հաւատ քրիստոնէութեան ծաղկեալ պայծառացան։ Չորրորդ. զՍուրբ Էջմիածինն նոր նորոգեալ զարդարեաց եւ պայծառացոյց անթուելի ծախիւք, որ զտեսօղսն հիացուցանէ։ Հինգերորդ. ընկալեալ զկաթողիկոսութիւնն եւ դիմաց առ արքայն Պարսից. եւ զդիմոսական հարկն, որ յառաջնոց կաթուղիկոսացն եդեալ էր ի վերայ Սբ. Էջմիածնայ, բազում ջանիւ գուն գործեալ վերացոյց եւ արար ազատ ի հարկապահանջութենէ։ Վեցերորդ. յամենայն տեղիս դասատունս եւ դպրոցս կարգեաց եւ լուսաւորեաց զազգս Հայոց, եւ յարաժամ ցանկայր տպագրութեանս, զի յառատութենէ գրոց ամենեքեան զիւրեաւ վարժեսցին, սակայն չեղեւ ձեռնհաս, զի փոխեցաւ աստի յանանց կեանսն առ*

---

*ի նորոգութիւն Էջմիածնայ տաճարին, էջ 493, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի Հայոց, Անթիլիաս, 1961, էջ 980–981, Յուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկչեան թանգարանի, հտ. Բ., կազմեց Լ. Մինասեան, խմբագրութեամբ՝ Օ. Եգանեանի, Վիեննա, 1972, էջ 237–239, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. չորրորդ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 60. «Մովսէս միոյ տեղեաւ Տաթեւացի սակաւ բան։ Համեմատութիւն աշակերտի առ վարժապետ որպէս բազմաց մի եւ սակս – Գիտելի է զի մարդուն Գ. ծնունդ ունի...։– Հմմտ. Օրագրութիւն, Երեմիա Չէլէպի, Երուսաղէմ, 1939, էջ ՂԷ.»։*

*ցանկալին իւր, յորում ծարաւին էր եւ արտասուօք ժտէր, միշտ կացեալ կաթուղիկոս չորս ամ եւ չորս ամիս, որոյ յիշատակն աւրհնութեամբ եղիցի։ Եւ յաջորդեաց զաթոռ նորա տէր Փիլիպոս ձեռնասուն աշակերտ իւր։ Եւ յաւուրս սորա եղեւ տպագրութիւնս ի քաղաքն Շօշ, յԱնապատն Ջուղայոյ, ի թուին ՌՁ. եւ է. (1638), ձեռամբ նուաստ Խաչատուր վարդապետի Կեսարացւոյ, որ տարի մի է եւ հինգ ամիս, որ զըցայգ զցերեկ անդադար աշխատիմք հանդերձ միաբան ուխտիս, զի ոչ եմք տեսեալ ի վարպետէ եւ ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն զՀոգին Սուրբ եւ զիղձս եւ զկենդանի աղօթս հոգեւոր հօրն մերոյ գնացելոյ առ Տէր, եւ են ձեռնտու եւ օժանդակ գործոյս հոգեւոր որդեակքն իմ վարպետ Յակոբճանն, եւ տէր Յովհաննէս քահանայն, եւ տէր Միքայէլն, եւ Յովսէփն։ Վասն որոյ յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ Խաչատուր վարդապետս եւ զձեռնտու եղբարսն իմ, եւ դուք յիշեա՛լ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Փառք ապենիազ (անկարօտ) Տեառն, որ ետ կարողութիւն անիմաստ արանացս հասնել յաւարտ երգարանիս Դաւթի ի թուին ՌՁէ.(1638), որում փառք յաւիտեանս»* [10]։

*1625 թ.-ին Խոտանանում գրչագրված մեկնաբանական բնույթի ձեռագիրը (ՄՄ. 1278) ուղեկցել է Մովսես Տաթեւացուն իր կյանքի ողջ ընթացքում։ Ձեռագրի գրիչը՝ Ղազարը, նույնպես ուղեկցում էր ուսուցչին, որին սույն ձեռագրի գրչությունից վեց տարի հետո՝ 1631 թ.-ին հանդիպում ենք Հովհանավանքում։ Գործող համալսարանում Ստեփանոս քահանան եւ Մարտիրոս ջահընկալը ՄՄ. 2381 ձեռագրում առավել մանրամասներ են հաղորդում այս մասին, առանձնահատուկ տեղ հատկացնելով Մովսես Տաթեւացուն, որ ստացողն է Հովհանավանքում գրչագրված սույն ձեռագրի. «Եւ արդ, եղեւ սկիզբն եւ կատարումն այսմ գծագրութեանս ի յերկիրս Արարատեան, ի յոտն Արագածու, ի սահմանս Կարփու, ի հրեշտակաբնակ մենաստանս Սուրբ Կարապետի, ընդ հովանեաւ բարձրաբերձ երկնահանգիստ Սուրբ Աստուածածնի տաճարիս, որ մակադրեալ յորջորջի Յոհանավանք, որ է այժմ*

---

[10] *ԺԷ. դարի հիշատակարաններ հտ. Բ., էջ 864–865. (1638 թ)։ «Մովսէսի գործունէութեան մի մասը կը կազմեն նաեւ զարքունական եւ զայլս գրեանս ստանալու համար ըրած աշխատութիւնները եւ թափած ջանքերը, որոնք մեծ նշանակութիւն ունին Մայրաթոռին կալուածական եւ ստացական իրաւունքներուն համար, եւ զորս Երեւանցին մանրամասնօրէն կը քաղէ (ՁԱՄ. 22)։ ...Թէպէտ այդ մասին Մովսէսի յաջորդներն ալ գովանի փութաջանութիւն ունեցան, բայց անոնց սկզբնաւորութիւն տուած ըլլալու եւ ուղղութիւն հաստատած ըլլալու պարծանքը իրաւամբ Մովսէսի պիտի վերագրուի (Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 2801)։*

*դպրոց եւ ժողովեալ կամ յոլով համբակատիպ մանկունքի յուսումն եւ ի վերծանութիւն Աստուածաշունչ գրոց, հրամանաւ եւ ծախիւք տեառն Մովսէսի սրբազան կաթողիկոսի ընդհանուր Հայկազեան սեռի՝ կրկին Լուսաւորչի»[11]։*

*Ստեփանոս քահանան մանրամասնում է կենսագրական տվյալներ օրվա կաթողիկոսի մասին, թե ինչպես է առաջին ուսումնառությունն ստացել Սրապիոն կաթողիկոսի մոտ եւ ապա աշակերտել Գրիգոր Կեսարացուն։ Պոլսում ստացել է վարդապետական գավազան, եւ ապա քարոզել ողջ Հայաստանով. «Եւ իբրեւ հայրս մեր զեկլեսիաստական իշխանութիւն, սկսաւ քարոզել զբանն Աստուծոյ ընդ ամենայն տեղիս, եւ հասեալ շրջագայութեամբ յարեւելս՝ ի բնիկ գաւառն Սիսական»[12]։*

*Կարծում ենք, որ հենց այստե՛ղ «Սիսականում» է, որ Մովսես Տաթեւացին պատվիրում է Ղազար գրչին 1625 թ.-ին գրառել մեր ուսումնասիրության առարկա սույն մեկնաբանական բնույթի ձեռագիրը։ «Եւ անտի յերկիրս Արարատեան, եւ տեսանէր խանգարեալ եւ եղծեալ զկարգս եւ զսահմանս եկեղեցւոյ ի հերատուկ եւ ի մեղմեխ առաջնորդաց ժամանակիս։ Եւ թաղծեալ տրտմէր եւ հոգայր, թէ զիա՞րդ լիցի հնար նորոգման եւ պայծառութեան սուրբ հաւատոյ կարգաց եւ կրօնից։ Եւ սկսաւ մեծաւ աշխատութեամբ եւ բազումն ջանիւ խրատել եւ ուսուցանել զեկեղեցականս եւ զաշխարհականս, եւ արարեալ իւր բնակութիւն ի յիշխանանիստ քաղաքն յԵրեւան, ի շիրիմ սուրբ առաքելոյն Անանիայ։ Եւ ժողովեցան առ ոտս սորայ բազում կրաւնաւորք եւ Գրոց աշակերտեալ մանկունք»[13]։ Իր տքնաջան աշխատասիրության պատճառով նրա համբավը տարածվում է ամբողջ Հայաստանով. «Քանզի ամենայն ոք բաղձայր տեսութեան նորա եւ լսել զքաղցրաբան վարդապետութիւն նորա»[14]։*

*Այնուհետեւ հիշատակագիրը պատմում է Մովսես Տաթեւացու այցելությունը Շահ Աբասին, եւ թե ինչպես է դառնում լուսարարապետ էջմիածնի, եւ մեջտեղից վերացնում էջմիածնի վրա դրված ծանր հարկը։ Ժողովուրդն ամբողջ եւ ազնվականները ցանկանում են Մովսեսին տեսնել կաթողիկոսական գահին. «Իսկ ի սոյն ժամու եւ սայ զկամս բնաւին ազգիս Հայոց ազդ արարեալ վեհ արքային, եւ առժամայն ոսկի մատանեաւ կնքեալ ետ*

---

[11] *Մայր ցուցակ, հտ. է., Երեւան, 2012, էջ 1143–1158։ Տե՛ս նաեւ՝ ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Բ., էջ 423–432։ ՄՄ. 2381, էջ 248ա–56բ։*

[12] *Մայր ցուցակ, հտ. է., էջ 1148։*

[13] *Նույն տեղում։*

[14] *Նույն տեղում, էջ 1149։*

*հրաման, թէ. Սայ լիցի առաջնորդ ազգին Հայոց եւ որպէս կամեսցի, այնպէս վարեսցէ զհայրապետական իշխանութիւնն իւր: Եւ այսպիսի մեծաշուք հրամանաւ արձակեցաւ ի բռնակալ արքայէն, հիկէն երբեմն Զօրաբաբէլ ի Դարեհէ, սակս շինութեան եւ նորոգութեան Նորս Սիոնի եւ Գրիգորաշէն լուսակառոյց սուրբ տաճարի: Եւ եկեալ հասեալ ի Վաղարշապատ քաղաք եւ յոգնօրինակ եւ պէսպէս երանգօք զարդարեաց զՄիածնին իջման տեղին՝ զմայրն եկեղեցեաց Հայաստանեայց»[15]:*

*Էջմիածնի Մատենադարանում էր պահվում նաեւ (այժմ՝ Մաշտոցի անվան Մատենադարան) Շահ Աբբասի հրովարտակը Մովսես Տաթեւացուն Էջմիածնի լուսարարապետ նշանակելու մասին, այս մասին տեղյակ էր նաեւ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսը[16]: Սույն հրամանագիրը թարգմանաբար հրատարակել է անվանի գիտնական Հ. Դ. Փափազյանը. «Արքայական հրաման եղավ այն մասին, որ զեկուցվեց, թե քրիստոնյա [Մովսես] վարդապետը Ուչքիլիսայում քրիստոնեական օրենքի համաձայն զբաղված է այդ [վանքի] բարգավաճման եւ բարեկարգման գործով եւ կատարում է լուսավորության եւ հարակից այլ գործեր: Այս մասին նա սրբազան հրամանագիր խնդրեց, ուստի որոշեցինք, որ ոչ մի մարդ արարած, լինեն դրանք հարգարժան հաfյմաներից, թե ուրիշներից, երբեք արգելք չհարուցեն եւ նեղություն չպատճառեն եւ ուշադիր լինեն նրա նկատմամբ:*

*Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն եւ, երբ հրովարտակս սրբազան կնիքով կնքվի, հավատան նրան:*

---

[15] *Նույն տեղում, էջ 1153:*

[16] Սիմեոն Երեւանցի, *Ջամբռ, աշխատասիրությամբ Հրանտ Օհանյանի, Երեւան, 2022, էջ 248. «Մեծ շահ Ապասին ռաղամ մի եւս գոյ ի Սուրբ Աթոռս, յորում զլուսաւորութիւնն Սրբոյ Աթոռոյս տայ Սիւնեցի Մօսէս վարդապետին, ըստ արզայի նորին, որ յետոյ եղեւ կաթուղիկոս: Գիտ յերեսն ցուցական եւ (...) համարովն, որ գրի ի տաճկաց ՌԼԶ. (1627) թուոջն»: Տե՛ս նաեւ՝ Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատարակեց Մեսրոպ վարդապետ Նշանեան, Երուսաղէմ, 1915, էջ 294–295. «Եւ վարդապետն խնդրելով զայս ինչ թէ. Ի քէն ոչ այլ ինչ խնդրեմ, բայց միայն զայս, որ դիւրին է տալն եւ ոչ դժուարինս, որ տայցէս ինձ Գիր հրամանի հաստատուն կնքելով զՍուրբ էջմիածնայ վերակացութիւնն եւ զնորոգութիւն նորին եւ զամենայն նորոգութիւն եկեղեցեաց եւ վանորէից եւ զոր եւ ինչ կամիցիմ առնել օրինօք գրոց իմոյ հրամանաւն, նա, ոչ ոք դիմասցի ինձ հակառակամարտութեամբ, ոչ ի քոյոցն եւ ոչ ի մերոցն: Եւ հրամայեաց Շահն, թէ. Զուչքիլիսին խալիֆութիւնն տամ քեզ, որ է կաթողիկոսութիւնն: Եւ վարդապետին պատասխանեալ ասաց. Ո՛չ այդպէս, զի որքան եւ նոքա կենդանիք իցեն, ոչ է յանդ ինձ առնուլ ի նոցանէ, զի գժտութիւն լիցի ի միջի մերում, այլ որպէս նախ խնդրեցի՝ այնպէս առնիջիր, եթէ կամ լիցի քեզ. եւ եթէ որ կամիցիս՝ ողջ լեր: Եւ ապա հրամայեալ Շահին ասելով, թէ. Այնպէս եղիցի, որպէս կամիցիս: Յայնժամ ետուր նմա հրովարտակս կնքեալ մատանեաւն եւ հրամանս եւ պատուէրս սաստկագինս...»:*

*Գրվեց 1036 թվականի Ջումադի առաջին ամսին (1627 թ. հունվար 18 – փետրվար 16)»[17]։*

*Հ. Փափազյանը հրատարակել է նաեւ 1629 թ.-ին Շահ Սեֆիի հրամանով էջմիածինը հարկերից ազատելու եւ Մովսես Տաթեւացուն կաթողիկոս նշանակելու մասին հրովարտակը[18]։*

*Նորընտիր կաթողիկոսը առավել մեծ ջանք է թափում ազգի լուսավորության ու կրթության բնագավառում՝ Մայր Աթոռի միաբանների թիվը հասցնելով ութ հարյուրի. «Եւ այսպէս աստուածաշնորհ վարդապետութեամբն իւրով ուսուցանէր ամենեցուն զԲանն կենաց։ Եւ էր անաչառ ի քարոզութիւն աստուածային Բանին իւրոյ նելկատուն հաւատին, այլ եւ խրատէր եւ յանդիմանէր զյանցաւորսն եւ զոչ եկեալսն յուղղութիւն։ Եւ ընդ այսր ամենայնի բազմացոյց զմիայնակեացս ի սուրբ մենաստանս եւ ի վանորայս, այլ եւ զորոց աշակերտեալ մանկունս, որ ցանկան եւ փափաքեն անխարդախ կաթինն։ Եւ զի այսպէս ի հոծ եւ ի յոլով տեղիս կաճառեաց եւ խրատացոյց զնոսա եւ ունի ընդ ձեռամբ յինքեան միաբանեալ եղբարս աւելի քան ըզութ հարիւր, եւ զպէտս ամենեցուն լիով հոգայ եւ այսպէս խնամեալ պահէ զնոսա կամօք բարերարին Աստուծոյ»[19]։ Ստեփանոս քահանա գրիչն իր երախտագիտությունն է հայտնում կաթողիկոսին. «Եւ ահա սրբազան հայրապետս դեռեւս աւրբստաւրէ նորոգէ եւ պայծառացուցանէ զՍուրբ Աթոռն, այլ եւ զխանգարեալ եւ եղծեալ կարգս եւ զսահման եկեղեցական կրօնից եւ կանոնաց հաստատէ եւ նորոգէ ի մեծ թուականիս հազար եւ Ջ. (1631), յորում ամի գրեցաւ տառս իմաստասիրական։ Եւ ահա այժմ ի դէպ եւ պատշաճ է մեզ աշակերտեալ մանկանցս նորին, այլ եւ բնաւին տոհմիս Հայկազեան յարազուարճ սրտիւ ձայնեալ զմարգարէականն բարբառ. Եթէ ոչ Տեառն զաւրութեանց թողեալ էր մեզ այս զաւակ՝ իբրեւ զՍոդոմ լինէաք [Եսայ. Ա. 9]։ Զոր եւ սիրալիր մաղթանօք հայցեմք ապենիազ եւ յամենակալ Տեառնէն, զի գթացեալ ի մեզ արաստոյ եւ յաղթող պահեսցէ զեռամեծ եւ երիցս երանեալ հայրապետս մեր, ընդ երկան*

---

[17] *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ երկրորդ (1601–1650 թթ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երեւան, 1959, էջ 104։ Վավերագիր 18։ Սեֆյան Շահ Աբբաս Ա.-ի 1627 թ. հրովարտակը Մովսես վարդապետ Խոտանանցուն էջմիածնի լուսարար նշանակելու մասին։ Թղթապանակ 1ա. վավերագիր № 47, բնագիր, Մեծություն՝ 56 × 18 սմ, գիր՝ շիրտսթե։*

[18] *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, պրակ երկրորդ (1601–1650 թթ.), կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, Երեւան, 1959, էջ 104–106։*

[19] *Մայր ցուցակ, հտ. է., էջ 1154։*

*աւուրս անբիծ քաղաքավարութեամբ եւ խաղաղական կենօք, ի պարծանս եւ ի գովութիւն մեզ՝ ձեռնասուն որդեկացս նորին եւ ի փառս անուան համագոյ Սուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. այժմ եւ ամենայն յաւիտեանս. ամէն. եղիցի, եղիցի Աստուծոյ, եւս եղիցի, եղիցի»[20]:*

*Ստեփանոսը հիշում է մատյանի ստացողին. «Զամէներջանիկ եւ զպատուական հայրապետս մեր (Մովսես Տաթեւացի), յորոյ սակս յայսմ վայրի բանս ճառեաց, որոյ վեհ հրամանաւն գծագրեցաւ գիրքս այս իմաստասիրական»: Խնդրում է նաեւ մոռացության չմատնել կաթողիկոսի աշակերտներին, որոնց մեջ իր յուրահատուկ տեղն է գրավում Ղազար գրիչը. «Նաեւ զբազմավաստակ սուրբ հօրս յիշեցէ՛ք զբազկակից եղբարքն եւ զաշակերտեալ մանկունք իւր՝ զյոգնահանճար եւ զբազմարուեստ զԽաչատուր վարդապետն Կեսարացի եւ զմաքրասնունդ զշահողքն ամենայնի՝ զՓիլիպպոս վարդապետն, որ յոլով եւ բազմադիմի երկ եւ աշխատանք ունին ընդ անարժանութիւնս մեր՝ ուսմամբ եւ ոգեշահ խրատով, զոր Տէրն Քրիստոս հատուսցէ զվարձս բարեաց ընդ տրիտուրն աշխատանաց աստ եւ կրկնակի գալստեանն. ամէն: Այլ եւ յիշեցէ՛ք ի սուրբ սրտի ձերում զաշակերտակից սոցա եւ զհամշիրամ վարդապետքն՝ զխարազնազգեացն զԹումայ վարդապետն, եւ զԱրիստակէս վարդապետն, եւ Զաքարիա վարդապետն, եւ միւս Խաչատուր վարդապետն, եւ զՅակոբ վարդապետն, եւ զկայծակնամաքուրն զտէր Յեսային, որ յոլով աշխատի ի վերայ միաբանից եղբարցս, եւ զաղօթասէր եւ զբաղձալին բնաւից զհամշիրամն իմ զտէր Ղազարն եւ զտէր Յակոբն, եւ զտէր Գրիգորն, եւ զտէր Սիմոնն, եւ զայլ համաշունչ եւ զմիախորհուրդ եղբարքս եւ զաշակերտեալ մանկունքս, որ կան ժողովեալ ի Համալսարանի կաթողիկոսարանիս»[21]:*

*Նույն 1631 թ.-ին Ղազար գրիչը մի նոր ձեռագրի սկիզբ է դնում եւ ավարտում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, օրինակելով Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» չափածո ստեղծագործությունը: Հիշատակարանից պարզ է դառնում Մովսես Տաթեւացու եւ Ղազար գրչի արյունակից բարեկամ լինելու հանգամանքը. «Արդ, գրեցաւ աստուածախօս մատեանս շնորհալից սուրբ հայրապետին Ներսէսի, որ կոչի Յիսուս Որդի, զոր ասացեալ է բարառնաբար զդիմաց անձին իւրոյ եւ զամե-*

[20] *Նույն տեղում, էջ 1155:*
[21] *Նույն տեղում, էջ 1155–1156:*

*նայն զղջացելոցն անձանց՝ մաղթանք հաճոյականք եւ աղօթք անուշահոտ, ի բուրումն Տեառն Աստուծոյ։ Եւ եղեւ զրաւ գրչութեան տառիս ի թուականութեանս Հայոց հազարերորդի եւ ութսուներորդի (1631), ի դրան մեծապայծառ եւ լուսակառոյց Սբ. Աթոռոյս Էջմիածնայ, ձեռամբ Ղազար սուտանուն դպրի, առ ոտս երիցս երանեալ եւ տիեզերալոյս հայրապետիս մերոյ տեառն Մովսէսի. իմոյ հարազատի ըստ մարմնոյ եւ տեառն հոգւոյ իմոյ։ Սա գոլով վիճակէն Սիւնեաց, տիեզերաքարոզ եւ աստուածաբան բաբունապետ, որ եւ կոչեաց ի գերագոյն իշխանութիւն հայրապետութեան, եւ եղեւ կրկին Լուսաւորիչ եւ նորոգող ազգիս Հայոց եւ զՍուրբ Էջմիածնի Աթոռս վերստին հաստատեաց շինութեամբ, պէսպէս շինութեամբ նորակերտ տանց եւ կարգաւորութեամբ հոգեւոր միաբանութեանց, ազատելով զսայ հարկապահանջութենէ անօրինաց։ Նաեւ վասն առաւել շնորհացն Աստուծոյ, որ էր ի սմա, սիրեցեալ էր յաչս ամենեցուն՝ ոչ միայն քրիստոնէից, այլ եւ Պարսից թագաւորացն եւ մեծամեծ իշխանացն, որպէս զԴանիէլ։ Եւ անուն մեծահամբաւ գովութեան սորա հռչակեալ էր ընդ ամենայն երկիր։ Որ եւ հրամայեաց իմում նուաստութեանս եւ անարհեստ գրչիս գրել զսուրբ տառս ի խնդրոյ հոգեւոր որդւոյ իւրոյ Ղազար կրօնաւորի, եւ ի վայելումն աշակերտեալ մանկանց իւրոց։ Արդ, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով կամ ի բերան առնելով, յիշեսջիք ի սուրբ աղօթս ձեր զբարեյիշատակ տէրս մեր զՄովսէս կաթողիկոսն, եւ սրբասնեալ հոգեւոր զորդիսն իւր՝ Խաչատուր վարդապետն եը զՓիլիպպոս վարդապետն, զտէր Եսային, որ է սպասաւոր Սբ. Աթոռոյս, որ եւ զանազան հարկիւ արար մեզ, զՋաքարիայ վարդապետն, զտէր Յովսէփն, զտէր վարպետ Ղուկասն, եւ զՂազար կրօնաւորն խնդրօղ տառիս, եւ զայլ միաբան եղբայրս, որք կան ի սպասաւորութիւն Սբ. Էջմիածնի աւելի քան զհարիւր թիւս, զորս հաստատուն պահեսցէ Քրիստոս Աստուածն մեր. եւ զյիշօղսդ հանդերձ///(շար. թափուած)»[22]։*

*Էջմիածնում եւս մեկ ձեռագրի գրչութիւն է սկսում Ղազար գրիչը, հավանական է 1632–1633 թթ.-ին Մայր Աթոռում, որը, սակայն կաթողիկոսի վաղաժամ մահվան պատճառով անավարտ է մնում, սակայն ավարտին է*

---

[22] *ԺԷ. դարի հիշատակարաններ (1621–1640 թթ.), հտ. Բ., էջ 441–442։ Տե՛ս նաեւ՝ ՄՄ, հտ. Բ., Երեւան, 1970, էջ 466, գրիչ՝ Ղազար դպիր, ստացող՝ Մովսէս կթղ. (ի վայելումն Ղազարայ կր.-ի)։*

*հասնում, իր մյուս աշակերտի՝ Փիլիպպոս կաթողիկոսի ժամանակաշրջանում[23]։*

*1636 թ.-ին իր մահկանացուն է կնքում նաեւ Ղազար գրիչը, բայց կարողանում է ավարտին հասցնել Ժողովածուի մեկ հատվածը միայն. «Զյոգնամեղ անձն՝ Ղազարս, որ օգնութեամբն Աստուծոյ զպարփակող ընդհանուր «էակաց» աւարտեցաք, աղաչեմ յիշել ի Տէր»[24]։ Սակայն 23 տարի հետո սույն ձեռագրի ստացողի հետգրության մեջ ընթերցում ենք. «Արդ, կողկողագին եւ գետնամած տենչանօք հայցեմ ի վայելողացդ այսմ բնագիր Արտաքնոցս, յիշեսջիք սերտ սիրով զտէր Ղազար քրիստոսատենչ քահանայն՝ զնօտար մեծի հայրապետին Մովսէսի, որ զԱրտաքնոց բնաբանս մինչեւ ի Պերի արմենասի վերջն գրեալ, եւ ինքն ի թվոյս ՌՁ. եւ*

---

[23] *Մայր ցուցակ, հտ. է., էջ 853–858. «Յայս ամէնառատ գթութիւնս Աստուծոյ հայեցեալք բազմերջանիկք հարքն սրբազանք եւ իսկագոյն արժանիքն յիշատակելոյ՝ տէր Մովսէս եւ տէր Փիլիպպոս կաթողիկոսք Հայոց, բայց զինչ, եթէ ոչ նոր արեգակուք, որոց հրալանաւ գրեցաւ Գիրքս Քարոզութեան, լի եւ կատարուներկոքին հատոր։ Առ որ եղեւ սկիզբն եւ աւարտ երկրորդ հատորին բանիւ տեառն Մովսէսի հայրապետի, ի տեղի իշման Միածնի, ի բարձրաբերձ Աթոռն ամենայն Հայկազնի, իսկ Առաջին հատորն հրամանաւ տեառն Փիլիպպոսի ամենափայլ հայրապետի, եւս ի սոյն տեառնակառոյց Կաթուղիկէի, որ եւ կատարեցաւ իսկ թուին ՌՂԹ. (1650), մնալով աստ յիշատակ անջնջելի բարերջանիկ հայրապետացս, որոց վարուք վասն եւ հանդիսապատում երախտեացն յիշատակեմ սեռօրէն ի ձեռն սակաւու տեսութեան, բայց նախ առաջ՝ Նոյն Մովսէսի։ Արդ, գոլով սա ի գաւառէն Սիւնեաց, լեալ աշակերտ Սրապիոն կաթողիկոսին, եւ շրջեալ ժամանակս ինչ ի Տունն Յունաց, առաքելաշնորհ քարոզութեամբ, եւ անտի եկեալ յԱրեւելս, ի գաւառ իւր՝ արար զսկիզբն քարոզութեան եւ նորաձեւ վարդապետութեան, քանզի ընդ այս ժամանակս բնաւին բարձեալ էր վարդապետ անուն յԱրեւելեան աշխարհէ, բայց թէ կային եպիսկոպոսունք՝ էին արժանի բամբասանաց, գնալով արտաքոյ կրօնից իւրեանց, վասն որոյ բնաւին խոպանացեալ էին մարդիկ ի գիտութենէ եւ ի գործոց։ Իսկ առաքելաշնորհ այրս այր Մովսէս վարդապետ իբրեւ էարկ զսերմն կենաց ի Տանն Արեւելեան, իսկոյն արմատացաւ, աճեաց եւ ետ պտուղ բազմապատիկ, զի շինեցան եկեղեցիք ի գեղաստանս, զարդարեցան վանորայք պարկեշտ կրօնիւք, եւ առաքինեցան միայնակեացք ի յանապատս։ Եւ զի՞ է քեզ. գրեթէ ամենեւիմբ առաքելանման էր շնորհաց տարածումն, զի կարի նեղագոյն է յառաջարկութիւնս, որոյ պատճառէ փութով յեգերումն տամ բանիս։ Արդ, թէպէտ սորա այսպիսի լուսաւորելոյ զաշխարհս, այլ Աթոռս Մեծ տունս Տէրունեան Սուրբ էջմիածին էր ամենեւին այրի եւ ամայի ի զարդուց եւ ի շինութեանց, եւ մանաւանդ թէ անկեալ ի ձեռս սեխեխաց։ Եւ եդեալ զձեռս իւր ի ծնօտի, կայր ի տարակուսի գրեթէ միայնակ եկեղեցին՝ մնացեալ ի մէջ լայնածաւալ դաշտին, որոյ լուսնացոյցքն եղեալ էին մուտ եւ ելք թռչնոց, եւ դրունքն՝ անասնոց։ Արդ, զայս իբրեւ տեսաներ Մեծ վարդապետն Մովսէս, վարանէր, տագնապէր եւ ի միտ իւր երկունս անհնարինս քաշէր՝ գոնեայ զի տեսցէ ի զարդարանս զկողոպտեալ հարսն Քրիստոսի։*

*Արդ, իբրեւ ետես ամենագութն Աստուած զսորա այսպիսի խորովակէզ իղձն իրաւարար ի վերայ իւրոյ հարսին՝ հանգոյն Մովսէսի առ Իսրայէլ եւ կամ Մեծին Ներսէսի եւս առ մերս, յայնժամ քաղցրացաւ, ի կամս իւր, անտես առնելով զյանցանս մեր, երեւեցոյց զսա զպատճառաւ ինչ արքային Պարսից ի Շահ Աբասին, եւ ետ Աստուած սը»/// (շար. թափուած)։*

[24] *Մայր ցուցակ, հտ. Ե., Երեւան, 2009, էջ 957, ձեռ. 1714, էջ 130բ։*

*Ե. (1636) ամին, ի տիս երիտասարդութեան վաղճանեցաւ, Գ. (3) անգամ պատարագեալ զՔրիստոս ի յանապատն ըՍտաթէէ։ Եւ ես՝ Յոհան, մասամբ աշակերտ նորին, առեալ նշան սիրոյ, որ առ նա պահեցի մինչեւ զթվականն ՌՃ. եւ Ը. (1659), եւ ապա, այլ զայլ ինչ որ կայ ի սմայ, ետու գրել, եւ ի մի տուփ արարեալ, կազմեցի սակս յիշման նորին, եւ ինձ մեղապարտիս, ի ժամանակս Յակոբու սրբազան հայրապետին Ջուղայեցու։ Վասն որոյ յիշեսցի վասն սիրոյն Քրիստոսի տէր Ղազարն ցանկալի եւ Յոհանես բանի սպասաւոր»[25]։*

*Յուրաքանչյուր ձեռագիր մատյան, կարելի է համարել կարեւոր մի փաստաթուղթ, որն իր մեջ ամփոփում է տվյալ ժանակաշրջանի դրոշմը՝ սկսած կաթողիկոսից, իշխանից, ձեռագրի ստացողից, գրչից, հետագա ստացողից, իշխող բռնակալներից մինչեւ տվյալ ձեռագրի օգտագործած նյութն ու բովանդակությունը։*

*Ակնսօր, կարծում ենք, հրամայական է դառնում վեր հանել եւ բարձր պահել, այս դեպքում, Սուրբ էջմիածնի ամբարած հոգեմտավոր գրավոր արժեքները, որոնք նորովի փայլ պիտի տան եւ վերաիմաստավորեն շարունակ արժեքազրկվող մեր ժամանակաշրջանին եւ օտար արժեքներին ապավինած որոշ հայորդիներին։*

ՀԱՎԵԼՎԱԾ Ա.

*ՄՄ. ՁԵՌ. ՀՄՐ. 1278*

*ԺՈՂՈՎԱԾՈՅ*

*Խոտանան*

*Ս. էջմիածին ՌՀԴ – 1625*

*Գրիչ՝ Ղազար, Իսահակ վրդ.։ Ստացող՝ Մովսէս Խոտանանցի (Տաթեւացի) կթղ.։*

*ԹԵՐԹ՝ 438. չգրուած՝ 1բ, 278աբ, 435բ – 38բ։ Պրակ՝ Ա – ԻԳ *12+Ա–ԺԴ*12(ԺԴ 6)։ Նյութ՝ թուղթ։ Մեծութիւն՝ 25,7*20։ Գրութիւն՝ երկսիւն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 35։ ԿԱԶՄ՝ դրոշմազարդ կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կարմիր մետաքս, լուսանցակողերը՝ կարմիր։*

*ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ – Կիսախորան՝ 7բ։ Ճակատազարդ՝ 2ա, 279ա։ Լուսանցազարդ՝ բուսական 279ա։ Զարդագիր՝ հանգուցագիր, թռչնագիր։ Գոյներ՝ կարմիր, կապույտ։*

---

[25] *Նույն տեղում, էջ 958։*

*ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ – 1. Ա. թուղթ առ Կորնթացիս Պօղոսի առաքելոյն։ Թ.–Ժ. դդ.։ 1. (Ա.Բ.) սկզբից, ստացուած 1 ամբողջական թերթի ընդլայնական երկտակումից։ Մագաղաթ, երկսիւն, բոլորագիծ երկաթագիր։ Կարդալ՝ Բա-Աա «/// խաւսի, եւ ասիցէ, թէ. Նզովեալ Յիսուս... եթէ ազատք ամենեքին զմի հոգի ար///» (ԺԲ 3–13)։ 2. Յովհան Ոսկեբերան, Մեկնութիւն Աւետարանին Մատթէի։ Ժ.–ԺԱ. դդ.։ 2. (Գ.–Դ.), վերջից. ստացուած 3 կից թերթերից։ Մագաղաթ, միասիւն, բոլորագիծ երկաթագիր։ Կարդալ՝ Գբ-Գա-Դա-Գբ. «Եւ յողդողդս առնէ զամենեսին յառնուլն եւեթ, որպէս Յուդասն եղեն։ Իսկ զիարդ ասիցէ Մատթէոս ասէ. Եւ այլք... զինչ ինչ չար մոլեկանն գործիցէ չբերեր փրփուր ընդ բերանն, այդ զանազանութիւնն տր///»։ Տե՛ս տպ. Վենետիկ. 1826, Գ., էջ 100–102 (Դա-Ն. տպ. չիք)։*

*Վիճակ՝ բաւարար. խունացած, թերթերի եզրերը թուլացած։ Կազմի կաշին՝ Մաշուած, եզրերը՝ քերծուած*[26]*։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

*Ա. 2ա–54բ [ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ, ԱՐԱՐԵԱԼ Ի ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԷ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ]*[27]

*1. 2ա–6ա Մեկնութիւն խորանաց Աւետարանին Մա[տթէոսի] – Մատեանք աստուածագիծք եւ հոգէբուխ վարդապետութիւնք...*[28]

*-6ա-7ա Եկեղեցական պատմութենէ – Առաքեալք էին երկոտասան եւ այլ աշակերտք ՀԲ. (72) եւ այլք բազումք...*

*-7բ-10ա Ժողովումն մեկնութեան սրբոյ Աւետարանին որ ըստ Մատթէոսի ի բանից իմաստուն վարդապետաց եկեղեցոյ. կարգեալ եւ յօրինեալ դիւրահաս ընթերցողաց։ Առաջին Ներսէսի Հայոց կաթողիկոսի ի խնդրոյ նորին եղբաւր Գրիգորիսի ի վերադիտողի Հայոց – Սիրոյ զաւրութիւն գերազանցէ՛ քան զբնութիւն եւ այնքան մինչ զի մոռացումն առնել տկարութեան*[29]*...*

---

[26] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտ. Դ., կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քէոսէեան։ Խմբագրութեամբ՝ Փ. Անթաբեանի, Յ. Քէոսէեանի, Ա. Ղազարոսեանի, Տ. Շահէ քհյ. Հայրապետեանի, Երեւան, 2008, էջ 799–802։*

[27] *Մեկնութիւն Սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. եւ անտի արարեալ յերանելւոյն Յոհաննու Երզնկացւոյ, որ կոչի Ծործորեցի, ի Հասանփաշայխանն(Կոստանդնուպօլիս), 1825, տե՛ս՝ տիտղոսաթերթ։*

[28] *Նույն տեղում, էջ 5–12։*

[29] *Նույն տեղում, էջ 16–21։*

*-10ա–54բ Գիրք լինելոյ որդւոյ Դաւթի, որդւոյ Աբրահամու – Զինչ խոսի աւետարանիչս զՄիածնէ Որդւոյ Աստուծոյ հանդերձեալ է ճառել[30]…*

*2. 54բ–155բ [ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՒՊՕԼՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏԻ ՅԱՒԵՏԱՐԱՆԱԳԻՐՆ ՄԱՏԹԷՈՍ][31]*

*-54բ [Ճառ քսաներորդ. Յորժամ պահիցէք մի՛ լինիք իբրեւ զկեղծաւորսն տրտումք…][32]. Ճրագ մարմնոյ ակն է, եթէ ակն առատ է, եւ մարմինդ լուսաւոր է (Մատթ. Զ. 22) – Զոր աւրինակ ոչ ցանկանայ այր ոսկի զարդ յանձն առնուլ եւ հանդերձս պատուականս զգենուլ… յորժամ միտքն այնպիսի ախտի ծառայիցեն[33]:*

*-54բ–5բ [Ճառ քսաներորդ առաջներորդ][34]. Ոչ ոք կարէ երկուց տէրանց ծառայել – Տեսանե՞ս, զիարդ առ սակաւ սակաւ յամենայն իրաց մերժէ[35]…*

*-55բ–6ա [Ճառ քսաներորդ երկրորդ][36]. Նայեցարուք ի շուշանն վայրենի որպէս աճել – Յորժամ ասաց վասն կարեւոր կերակրոցն եւ եցոյց, թէ. Զէ պարտ հոգալ[37]…*

*-56ա–7բ [Ճառ քսաներորդ երրորդ][38]. Մի՛ դատիք, զի մի՛ դատիցիք – Այսինքն՝ մի՛ դատիք անիրաւութեամբ, զի մի դատապարտեսջիք վասն անիրաւութեանն[39]…*

*-57բ–8բ [Ճառ քսաներորդ չորրորդ][40]. Ո՛չ ամենայն որ ասիցէ ցիս Տէր Տէր, մտցէ յարքայութիւնն երկնից, այլ որ արասցէ զկամս Հօր իմոյ – Եւ ընդէ՞ր արդեւք չասաց, թէ որ արասցէ զկամս իմ, այլ քանզի դեռ այն պատշաճ էր եւ ընդելական[41]…*

---

[30] Նույն տեղում, էջ 23–157

[31] Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդիանուպօլսի եպիսկոպոսապետի յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք կրկին, Վենետիկ, 1826, տիտղոսաթերթ:

[32] Նույն տեղում, էջ 321:

[33] Նույն տեղում, էջ 327–328 (Ղազար գրիչը հավանորեն Գրիգոր Տաթեւացու՝ որպես ձեռագրի ստացողի ցուցումով բանաքաղությամբ է օգտվում Հովհան Ոսկեբերանի սույն աշխատությունից):

[34] Նույն տեղում, էջ 334:

[35] Նույն տեղում:

[36] Նույն տեղում, էջ 343:

[37] Նույն տեղում, էջ 343–350:

[38] Նույն տեղում, 357:

[39] Նույն տեղում, էջ 357–374:

[40] Նույն տեղում, էջ 378:

[41] Նույն տեղում, էջ 379–387:

*-58բ–9բ [Ճառ քսաներորդ հինգերորդ][42]. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս զայնոսիկ զարմանային ժողովուրդքն ընդ վարդապետութեան նորա – Թէպէտ եւ տաղտկալ պարտ էր ընդ ծանրագոյն բանսն, եւ տաղտապել ընդ բարձրութիւն հրամանացն[43]...*

*-59բ–60բ [Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք երկրորդ, Ճառ առաջին][44]. Նորին Յոհաննու [Ոսկեբերանի] ի Կապեռնայում, Գիրք երկրորդ – [Ի]բրեւ եմուտ Յիսուս ի Կապեռնաւումն. մատեաւ առ նա Ճ. (100)պետ մի, բորոտն յորժամ էջ Յիսուս ի լեառնէ անտի յայնժամ եմուտ ի Կապառնաւում[45]...*

*-60բ–1բ [Ճառ երկրորդ][46]. Իբրեւ եկն Յիսուս ի տուն Պետրոսի Սիմոնի անկեալ դնէր տապացեալ ջերմամբ – Մարկոս զվաղվաղակին յաւել. կամի եւ զժամանակն ցուցանել, իսկ սա զնշանացն միայն եդ եւ ժամանակն ո՛չ ինչ նշանակեաց[47]...*

*-61բ–3բ [Ճառ երրորդ][48]. Եւ իբրեւ եմուտ ի նաւ աշակերտօքն. շարժումն մեծ եղեւ ի ծովուն - //(էջ 62ա) Ղուկաս ազատէ զանձն ի պահանջելոյ զկարգ ժամանակին, քանզի այսպէս ասաց. Եթէ եղեւ ի միում աւուրց ինքն ել ի նաւ[49]...*

*-63բ–4բ [Ճառ չորրորդ][50]. Իբրեւ անց յայնկոյս, եկն ի քաղաք իւր[51] – Իւր քաղաք զկապեռնաւումն կոչէ, զի ծնաւ զնա Բեդղէեմ, եւ սնոյց Նազարէթ եւ բնակութիւնն միշտ Կապեռնաւում էր...[52]*

*-64բ–6ա [Ճառ հինգերորդ][53]. Մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս ետես այր մի, զի նստէր ի մաքսաւորութիւն Մատ[թէոս] անուն – Իբրեւ արար զնշանսն, ոչ առ անդէն զտեղի, զի մի զնախանձն բորբոքիցէ, այլ շնորհէր նոցա խոյս տալով... (65բ ունի հավելված ինչ, հետեւյալ սկսված-*

---

[42] Նույն տեղում, էջ 390:
[43] Նույն տեղում, էջ 390–395:
[44] Նույն տեղում, էջ 405:
[45] Նույն տեղում, էջ 405–416:
[46] Նույն տեղում, էջ 425:
[47] Նույն տեղում, էջ 425–432:
[48] Նույն տեղում, էջ 436:
[49] Նույն տեղում, էջ 436–443:
[50] Նույն տեղում, էջ 449:
[51] Հմմտ. տպագրի կան որոշակի տարբնթերցվածքներ:
[52] Նույն տեղում, էջ 449–454:
[53] Նույն տեղում, էջ 456:

*քով. «Ընտրեաց նա զՅակոբոս մաքսաւոր, զի քաջալերեսցին ընկերք նորա երթալ ընդ նմա...» չունի տպ.)[54]։*

*-66ա–7ա [Ճառ վեցերորդ][55]. Մինչդեռ նա զայն խօսէր եկեալ իշխան մի երկիրպագանէր եւ ասէր. Դուստր իմ արդ եւս վախճանեցաւ – Ժամանեսցին արդիւնքն բանիցն, քանզի որ եկեալ աղաչէր գլուխ էր ժողովրդեանն, եւ սուգն անհնարին, զի միամօր էր մանուկն, եւ ԲԺ. (12) ամեայ[56]...*

*-67ա–70ա [Ճառ եւթներորդ][57]. Եւ մինչդեռ անցանէր Յիսուս, զհետ եղէն նմա կոյրք Բ. (2) աղաղակէին եւ ասէին. Ողորմեա՛ մեզ որդի Դաւթի – Եւ ընդէ՞ր արդեւք ձգեալ տանէր զնոսա եւ ստեպ ստեպ աղաղակել տայր։ Դարձեալ այսու եւս ուսուցանէ մեզ[58]...*

*-70ա–1ա [Ճառ ութերորդ][59]. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ ոչխարս ի մէջ գայլոց – Եւ քանզի վասն կարեւորացն պատուիրեաց նոցա, եւ վասն պիտոյից կերակրոցն արար զնոսա վստահս, եւ զամենեցունց դրունս եբաց նոցա առաջի, եւ նշանագործութեանցն հանդիսիւ ամուրս վառեաց զնոսա[60]...*

*-71ա–2բ [Ճառ իններորդ][61]. Յորժամ հալածիցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ, փախիջիք յայլ, եւ ի նմանէ ի միւս եւս – Իբրու ասաց զահագինսն եւ զխիստսն, որք եւ զադամանդ անգամ բաւականէին վնասել, որք յետ խաչին եւ յարութեանն եւ ամբառնալոյն պատահելոց էին նոցա[62]...*

*-72բ–3բ [Ճառ տասներորդ][63]. Մի համարիք եթէ խաղաղութիւն եկի արկանել յերկիր, այլ սուր – Զի մի յորժամ զայս ամենայն լսիցեն, ասիցեն, թէ վասն այնորիկ եկիր զի զմեզ կոտորիցես, եւ զայնոսիկ որք մեզն հաւատայցեն, պատերազմաւ զերկիրն լցուցուս[64]...*

*-73բ–4բ [Ճառ մետասաներորդ][65]. Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպատուէրս ԲԺ. (12)-ից աշակերտաց իւրոց փոխեցաւ անտի – Քանզի*

---

[54] Նույն տեղում, էջ 456–465։
[55] Նույն տեղում, էջ 470։
[56] Նույն տեղում, էջ 470–475։
[57] Նույն տեղում, էջ 482։
[58] Նույն տեղում, էջ 482–493։
[59] Նույն տեղում, էջ 501։
[60] Նույն տեղում, էջ 501–508։
[61] Նույն տեղում, էջ 519։
[62] Նույն տեղում, էջ 519–527։
[63] Նույն տեղում, էջ 531։
[64] Նույն տեղում, էջ 531–537։
[65] Նույն տեղում, էջ 545։

*զնոսա առաքեաց մեկուսի այնուհետեւ առնէր զանձն, եւ տայր նոցա տեղի եւ ժամանակ[66]...*

*-74բ–6բ [Ճառ երկոտասաներորդ][67]. Իբրեւ գնացին առաքեալքն Յովհաննու, սկսաւ ասել առ ժողովուրդսն վասն Յովհաննու – Յովհաննու աշակերտացն ամենայն պէտքն բարւոք վճարեցան եւ հաստատեալք գնացին[68]...*

*-76բ–7բ [Ճառ երեքտասաներորդ][69]. Յայնժամ պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. Գոհանամ զքէն Հայր: Յոյնն ասէ. Աստուած Հայր երկնի եւ երկրի (չիք տպ.) – Տեսանե՞ս որչափ իրօք փութա ածել զնոսա ի հաւատս, գոհանալովն վասն հաւատացելոցն, զի խոստովանն լինել գոհանալ է[70]...*

*-77բ–8ա [Ճառ չորեքտասաներորդ][71]. Ի ժամանակն յայնմիկ գնաց Յիսուս ի շաբաթու ընդ արտորայսն, եւ աշակերտքն ի քաղցնուլն սկսան հասկ փշրել եւ ուտել – Ղուկաս ասէ. Ի շաբաթու երկրորդում առաջնում: Զինչ իցէ երկրորդ առաջնոյն, եթէ ոչ զի կրկին ինչ դատարկութիւն լինէր[72]...*

*-78ա–9բ [Ճառ հնգետասաներորդ][73]. Իբրեւ գնաց անտի եւ եկն ի ժողովուրդս նոցա, բերին առ նա այր մի որոյ ձեռն իւր գոսացեալ էր – Դարձեալ ի շաբաթու բժշկէ, ընդ այնմ եւս իրաւունս իմն տալ կամի, որ ինչ յաշակերտսն գործեցաւ... եւ ոչ ինչ այնպէս տրտմեցուցանէր զնոսա, որպէս մարդկան փրկութիւն... եւ ընդ այնմ մերթ սպանանել մտաբերէին եւ մերթ բամբասել մտաբերէին: [Յորդորակ] – Զի այնպէս իսկ է հեռ նախաձու[74]...*

*-79բ–80բ [Ճառ վեշտասաներորդ][75]. Գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա եւ ասէ. Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն աւերի – Նաեւ յառաջագոյն իսկ բամբասէին, եթէ. Բէեղզիբուղաւ հանէ: Այլ յայնժամ ինչ ոչ սաստեաց, զի տացէ նոցա պատճառս... (ունի հավելված. 80բ – Ո՛չ ասաց Տէրն, թէ ոչ գտանէ զողորմութիւն գթութեան... վասն այսորիկ եւ արտաքոյ քան զթողութիւն, է՛ այս մեղանք եւ վնաս)[76]:*

---

[66] Նույն տեղում, էջ 545–549:
[67] Նույն տեղում, էջ 556:
[68] Նույն տեղում, էջ 556–565:
[69] Նույն տեղում, էջ 573:
[70] Նույն տեղում, էջ 573–578:
[71] Նույն տեղում, էջ 583:
[72] Նույն տեղում, էջ 583–588:
[73] Նույն տեղում, էջ 591:
[74] Նույն տեղում, էջ 591–596:
[75] Նույն տեղում, էջ 603:
[76] Նույն տեղում, էջ 603–611:

*-80բ–1բ [Ճառ եւթնուտասներորդ][77]. Կամ արարէք զծառն չար եւ զպտուղն չար – //(81ա) Դարձեալ այլազգ յանդիմանէ զնոսա, եւ չհամարի բաւական զառաջինն յանդիմանութիւնն։ Եւ այսու ո՛չ եթէ զանձն ազատէ ի բամբասանաց...[78]։*

*-81բ–2բ [Ճառ ութուտասներորդ][79]. Խնդիր դպրացն եւ փարիսեցւոցն որք կամէին նշան ինչ տեսանել – Արդ, կայր ինչ քան զայն անմտութիւն. ո՛չ, այն ամբարշտութիւն էր, յետ այնչափ նշանացն իբրեւ թէ չէր ինչ բնաւ լեալ ասէին. Կամիմք ի քէն նշան ինչ տեսանել...[80] //(82բ–3ա)Փր. [Յայլմէ] – Դշխոյն հարաւոյ օրինակ է եկեղեցւոյ, զի զնոյն օրինակ եկն եկեղեցի առ Տէրն. եւ որպէս նա դատապարտէ զնոսա, նոյնպէս եւ եկեղեցի...*

*-83ա բ [Ճառ իններուտասներորդ][81]. Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն խօսէր մայրն նորա եւ եղբարքն կային արտաքոյ եւ խնդրէին զնա – Հպարտութեան նշան էր խնդիրն, զի կամեցաւ ցուցանել, թէ որչափ ինչ իշխանութիւն ունի որդոյն, վասն զի չեւ եւս, մեծամեծս իմանային զնմանէ... գա առ մեզ։ //(83բ–4բ) Փր. [Յայլմէ] – Եւ ի սերմանելն իւրում, էր որ անկաւ ճանապարհաւն եւ թռչունք կերան զնա։ Արդ, սերմնահանն մի է, եւ երկիրն մի է, այլ արմտիքն չորք բաժինք երեւեցան... բայց յընտրութիւն մարտիրոսութեան եւ վկայութեան ոչ կոչեցան[82]։*

*-84բ–5ա [Ճառ քսաներորդ][83]. Մատեան աշակերտքն եւ ասեն. Ընդէ՞ր առակօք խօսիս ընդ նոսա – Արժան է զարմանալ ընդ աշակերտսն, թէ զի՞արդ ցանկային ուսանել, եւ դէպ ժամանակի մնային, թէ երբ պարտիցէ հարցանել... եւ ապա սկսանի ասել, զոր յառաջագոյն ասացաք[84]։ //(85ա) Փր. [Յայլմէ] – Զմիւսն թէպէտ եւ յափշտակել կամի սատանայ, այլ մեք եմք տեարք տալ ի ձեռս եւ չտալ...*

*-85ա–6ա [Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք երկրորդ, Ճառ քսաներորդ առաջներորդ][85]. Այլ միւս եւս առակ երկրագործին զբարիոք սերմն սերմանել յագարակին, յորում եւ ի քուն*

---

[77] Նույն տեղում, էջ 614։
[78] Նույն տեղում, էջ 614–617։
[79] Նույն տեղում, էջ 624։
[80] Նույն տեղում, էջ 626–629։
[81] Նույն տեղում, էջ 638։
[82] Նույն տեղում, էջ 638–643։
[83] Նույն տեղում, էջ 652։
[84] Նույն տեղում, էջ 652–656։
[85] Նույն տեղում, էջ 660։

*լինելն նորա. չար որոմանցն սերմանողն զիւրն ցանէ – Աստ զհերձուածողացն զժողովսն յառաջագոյն ասաց, եւ այս իսկ սատանայի խարդախութեանն գործէ... ասէ զցորեանն ժողովեցէք յշտեմարանս իմ[86]: //(86աբ) Փր. [Յայլմէ] – Այլ միւս եւս մանանխոյն, զի փոքր էր նա քան զամենայն սերմանիս – Վասն փոքրկութեան քարոզութեանն, որ իսկ զբանն էր ասաց...*

*-86բ–7ա [Ճառ քսաներորդ երկրորդ][87]. Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս ընդ ժողովրդեանն եւ առանց առակ ոչ խօսէր ընդ նոսա – Մարկոս ասէ, որպիսի ինչ կարէին լսել. Խօսէր ընդ նոսա առակօք: Եւ զի ցուցցէ, թէ ոչ օտար ինչ[88]... //(87աբ) Փր. [Յայլմէ] – Թէ ի հնոց հրոյն անկանելոց են, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց: Բայց դարձեալ, յետ այսր ընտրութեան, որ ի ծովեսն է...*

*-87բ–9ա [Ճառ քսաներորդ երրորդ][89]. Եւ եղեւ,– ասէ,– իբրեւ կատարեաց Յիսուս զառակս զայս, գնաց անտի – Վասն էր արդեւք գնայր անտի, զի ամենայն ուրէք կամեր սերմանել զբանն: Եւ եկն ասէ ի քաղաք իւր[90]...*

*-89ա–91ա [Ճառ քսաներորդ չորրորդ][91]. Իբրեւ լուաւ Յիսուս գնաց յանապատ տեղի առանձին – Տե՛ս զի՞ արդ ամենայն ուրեք թողու զբազմութիւնն եւ խոյս տայ: Յորժամ մատնեցաւ Յովհաննէս եւ յորժամ հրէայքն լուան, թէ զբազումս աշակերտէ... //(90բ) Փր. [Յայլմէ] – Եցոյց դարձեալ զզօրութիւն բանին իւրոյ առ հրամայելսն, եւ զարագութիւն պարգեւաց իւրոց... եւ ոչ է նա տեսիլ ընդունայն[92]:*

*-91ա–2ա [Ճառ քսաներորդ հինգերորդ][93]. Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդն ել ի լեառն կալ յաղօթս – Վասն էր ել ի լեառն, զի զմեզ ուսուցանիցէ, թէ բարիոք է անապատ եւ միայնութիւն, յորժամ աղօթս կամիցիմք մատուցանել[94]...*

---

[86] Նույն տեղում, էջ 660–663: Քարոզի վերջաբանը նույնն է Հովհան Ոսկեբերանի հետ, մի փոքր հատված էլ վերցված է «Յորդորակից»:

[87] Նույն տեղում, էջ 670:

[88] Նույն տեղում, էջ 670–675:

[89] Նույն տեղում, էջ 680:

[90] Նույն տեղում, էջ 680–689:

[91] Նույն տեղում, էջ 698:

[92] Նույն տեղում, էջ 698–704:

[93] Նույն տեղում, էջ 712:

[94] Նույն տեղում, էջ 712–716:

*-92ա–3բ [Ճառ քսաներորդ վեցերորդ][95]. Յայնժամ մատեան առ Յիսուս յԵրուսաղէմացոց դպիրք եւ փարիսեցիք – «Յայնժամ», ԵՐԲ: Յորժամ բիւրուց բիւրսն նշանս գործեաց, Յորժամ զհիւանդսն բժշկեաց մերձենալով միայն ի քղանցս հանդերձիցն...[96]*

*-93բ–5ա [Ճառ քսաներորդ եւթներորդ][97]. Իբրեւ ել Յիսուս անտի, գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի – Մարկոս ասէ չկարաց թաքչել, թէպէտ եւ կամեցաւ մտանել ի տուն, եւ ոչ կամէր եթէ ոք գիտացէ զնա[98]...*

*-95ա–6ա [Ճառ քսաներորդ ութերորդ][99]. Կոչեաց Յիսուս զաշակերտսն եւ ասէ. Գթամ ես ի ժողովուրդս, զի Գ.(3) աւրեա աստ են, եւ ոչ ունին ինչ ուտել – Վերագոյնն մինչդեռ զայն նշանսն առնէր, նախ՝ բժշկեաց զկոյրսն, նոյնպէս եւ աստ ի կաղացն եւ ի կուրացն բժշկութենէ եկն յայս... 96աբ [Յորդորակ] – Մի այսուհետեւ եւ մեք ողոքեսցուք ամենայն ուրէք զայնոսիկ, որ ընդ ձեռամբ մերով իցեն[100]...*

*-96բ–7ա, 97ա–9բ [Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք երրորդ թերի, Յառաջնմէ ճառէն][101]. Նորին Յոհաննու գիրք երրորդ. Եւ ելեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեան Կեսարեա, հարցանէր ցաշակերտսն. Զո՞ ոք ասեն զինէն մարդիկդ, թէ իցեմ – Վասն էր զշինիչ քաղաքին ասիցէ յանուանէ, քանզի եւ էր այլ Կեսարիա Ստրատոնեան, եւ կապուտ կացոյց... Ապա Շմաւոն գլուխ, զգլուխսն խօսեցաւ, ձեռներեց լեալ ի պատասխանիսն. Դու ես,– ասէ,– Քրիստոս Որդի Աստուծոյ կենդանւոյ[102]: (Այստեղ տպագիրը ընդհատվում է, հավանական է, որ վենետիկյան բնագրում շարունակությունը թափված է եղել: Հաջորդ միավորը արձանագրված է «Յերրորդ ճառէն», տե՛ս տպ. Գիրք երրորդ, էջ 3):*

*-99բ–105ա [Յերրորդ ճառէն][103]. Ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք ի սոցանէ, որ աստ կան, որք մի՛ ճաշակեսցեն մահ մինչեւ տեսցեն զՈրդի Մարդոյ եկեալ փառօք – Քանզի բազում ինչ ըզ//(էջ 100ա)վշտաց ճառեաց եւ*

---

[95] Նույն տեղում, էջ 722:
[96] Նույն տեղում, էջ 722–731:
[97] Նույն տեղում, էջ 737:
[98] Նույն տեղում, էջ 737–743:
[99] Նույն տեղում, էջ 751:
[100] Նույն տեղում, էջ 751–759:
[101] Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս, Գիրք երրորդ տպ. թերի, Յառաջնմէ ճառէն, էջ 1:
[102] Նույն տեղում, էջ 1–2: Տպ. թերի:
[103] Նույն տեղում, էջ 3:

*զմահուանէ, եւ զչարչարանաց իւրոց, եւ զաշակերտացն կոտորուածոց, եւ զսաստիկս...*[104]

*-105ա–6բ [Ի չորրորդ ճառէն]*[105]*. Իբրեւ եկն ի ժողովուրդն,– ասէ,– մատեաւ այր մի ի ծունր իջաներ եւ ասեր. Տէր ողորմեա որդոյ իմոյ – Զայրս զայս կարի յանհաւատութեան ախտացեալ ցուցանէր գիր: Եւ այս ի բազում իրաց իսկ յայտ է. նախ յայնմանէ, զոր Քրիստոս ասաց...*[106] *(տպ.՝ միայն 101ա. «Զամենայն իսկ զդասուց դիւացն ասէ... եւ առաւել նախ աղօթք պիտոյ են):*

*-106բ–12ա Մինչ շրջէին նոքա ի Գալիլեա, ասէ ցնոսա Յիսուս. Մատնելոց է Որդի Մարդոյ ի ձեռս մարդկան, եւ սպանանիցեն զնա – Զի մի ասիցեն, թէ աստ ցանգ միայն տուայտիցիմք: Դարձեալ վասն չարչարանացն ճառէ, զոր յորժամ լսէին, եւ տեսանել իսկ զկամէին...*[107]

*-112ա–4ա Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս զայս, գնաց ի Գալիլիէ եւ եկն ի սահմանս Հրէաստանի – Ստէպ իմն եւ յաճախագոյն թողոյր զՀրէաստան վասն նախանձու նոցա, բայց արդ իսկ եւ հուպ գայր, քանզի եւ ժամանակ իսկ չարչարանաց մերձեալ էր...*[108]

*-114բ–7բ Ահաւասիկ ասէ ոմն մեծատուն մատեաւ եւ ասէ. Վարդապետ բարի զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս ժառանգեցից – Ոմանք բամբասեն զայրս զայս իբրեւ զմեղմեխոք եւ զչար, թէ փորձելով մատեաւ հարցանել, բայց ես ասեմ, թէ. Արծաթասէր եւ ընչից կարօտ...*[109]

*-117բ–9բ [Ի յերկոտասաներորդ ճառէն]*[110]*. Մինչդեռ ելանէր Յիսուս Երուսաղէմ, առանձինն աշակերտացն սկսաւ ասել վասն չարչարանացն եւ խաչին, եւ թէ յերիր յաւուր յարիցէ – Ոչ վաղվաղակի ելանէ յԵրուսաղէմ ի Գալիլեա եկեալ, այլ նախ նշանս առնէ եւ ըմբերանէ զփարիսեցիսն եւ խօսի ընդ աշակերտսն...*[111] *//(119բ–20բ)[Յայլմէ] – [Ի]բրեւ ելին նոքա յԵրիքովէ. գնացին զհետ նորա ժողովուրդ բազումք, եւ բժշկեաց զա-*

---

[104] Նույն տեղում, էջ 3–10: Տպ. թերի:

[105] Նույն տեղում, էջ 14:

[106] Նույն տեղում:

[107] Տպ. ունի միայն հատված Յորդորակից. «Ի հինգերորդ Ճառէն. Յորդորակ. Քանզի իբրեւ զծառայ մի չար...», էջ 19–20:

[108] Տպ. ունի միայն հատված Յորդորակից. «Ի վեցերորդ Ճառէն. Յորդորակ. Սմին նմանողք լիցուք եւ մեք, եւ մի՛ դանդաղեցուք յիրաց ինչ...», էջ 21–27:

[109] Տպ. ունի միայն հատված «Յորդորակից». «Ի յութերորդ Ճառէն. Յորդորակ. Եւ արդ ասացից, եւ եդից զմեղսն առ միմեանս, զոր առ Աստուած մեղանչիցեմք...», էջ 28–32:

[110] Նույն տեղում, էջ 40:

[111] Նույն տեղում, էջ 40–49:

*մենեսեանսն։ [Մեկն.] Տեսանես ուստի գայր յերուսաղէմ, եւ ուր շրջէր ցայնժամ...*

*-121բ–2բ [Ի յերեքտասանրորդ ճառէն][112]. Եւ իբրեւ մօտ եղէն յերուսաղէմ. եկին ի Բեթբաքէ, եւ ի Բեթանիայ մերձ ի լեառն Զիթենեաց։ Առաքեաց զաշակերտսն ածել զէշն եւ զաւանակն – Թէպէտ եւ բազում անգամ ել Յիսուս յերուսաղէմ, այլ ո՛չ երբէք այնպիսի ինչ սպասուք։ Եւ զինչ պատճառք իցեն այնր, քանզի դեռ սկիզբն էր տնտեսութեանն...[113]*

*-122բ–6ա [Ի յերեքտասանրորդ ճառէն][114]. Եւ այգուցն իբրեւ դարձաւ ի քաղաքն քաղցեաւ – Եւ զիա՞րդ արդեօք այգուցն քացեաւ։ Յորժամ կամէր թոյլ տայր մարմնոյն զգալ իւրում կարեացն. Ետես,– ասէ,– թզենի մի առ ճանապարհաւն, եկն ի նա եւ ոչ ինչ եգիտ...[115](Տպ. մինչեւ 123բ)։*

*-126ա–8ա Յայնժամ չոգան փարիսեցիքն եւ խորհուրդ արարին, թէ որպէ՞ս դիցեն նմա յորոգայթ բանիւք – «Յայնժամ», ԵՐԲ։ Յորժամ կարի ստրջանալ պարտ էր եւ զարմանալ ընդ մարդասիրութիւնն, յորժամ երկնչել պարտ էր ի հանդերձելոցն... (Տպ. ունի միայն Յորդորակ)։*

*-128ա–9ա Տեառն Յոհաննու Ոսկեբերանի Գիրք Զորրորդ[116]. Փարիսեցոցն. Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան, թէ պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին – Դարձել պատճառսն դնէ աւետարանիչն, վասն որոյ պարտ է լռել, եւ զնոցա ամբաստանութիւնն, որ եւ այսու եւս յայտ յանդիման ցուցանէ...*

*-129ա–32բ Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողովուրդն եւ ընդ աշակերտսն իւր – «Յայնժամ», ԵՐԲ։ Յորժամ զայս ամենայն ասաց, յորժամ ըմբերանեաց զնոսա, յորժամ պապանձեցոյց զնոսա, զի մի՛ իշխեսցեն փորձել զնա...*

*-132բ–6բ Իբրեւ ել Յիսուս ի տաճարէն եւ գնաց, մատեան աշակերտքն ցուցանել նմա զշինուած տաճարին – Քանզի ասաց, եթէ. Թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ, եւ բազում այլ ինչ վերագոյնն յառաջագոյն գուշակեաց զնոցա չարիսն։ Իսկ աշակերտացն զայն լուեալ, զարմանալով իմն մատուցեալ ցուցանէին նմա զգեղեցկութիւն տաճարին...*

---

[112] Նույն տեղում, էջ 51։
[113] Նույն տեղում, էջ 51–54։ Տպ. թերի։
[114] Նույն տեղում, էջ 55։
[115] Նույն տեղում, էջ 55–57։ Տպ. թերի։
[116] Զունի տպ.։

*-136բ–7բ [Ի քսաներորդ չորրորդ ճառէն][117]. Արթուն լերուք, զի ոչ գիտէք – Քանզի կասկածագոյնս կամի լինել նոցա ցանկ, յայտարարեալ, թէ նմին իրի չասաց նոցա զայն...[118]*

*-137բ–8բ [Ի քսաներորդ հինգերորդ ճառէն][119]. Յայնժամ նմանեալ լիցի արքայութիւնն երկնից Ժ.(10) կուսանաց – Եւ արդ, էր վասն ի կուսանաց դէմս հանէ զառակն: Ո՛չ վայրապար ինչ ճառէ վասն մեծամեծ երեսացն, յորժամ կուսութենէ խօսեցաւ...[120]*

*-138բ–40ա [Ի քսաներորդ վեցերորդ ճառէն][121]. Յորժամ եկեսցէ Որդի Մարդոյ փառօք Հօր իւրոյ. եւ ամենայն հրեշտակք ընդ նմա – Քանզի այժմ անարգանօք եւ թշնամանօք եւ նախատանօք, բայց յայնժամ յԱթոռ փառաց նստցի, եւ ստեպ զփառացն յիշէ//(139ա)ցուցանէ, քանզի խաչն մօտ էր...[122]*

*-140ա–1ա [Ի քսաներորդ եօթներորդ ճառէն][123]. Իբրեւ եկն Յիսուս ի Բեթանիայ ի Տուն Սիմոնի բորոտի, մատեաւ առ նայ կին մի, որ ունէր շիշ իւղոյ – Կին այս թուի ինձ, միեւնոյն իցէ աւետարանիչսն, բայց չէ մի այլ, յերիս աւետարանիչսն միեւնոյն երեւի, Բայց Յոհան ո՛չ միեւնոյն, այլ այլ իմն զարմանալի՝ քոյր Ղազարոյ...[124]*

*-141ա–2բ [Ի քսաներորդ ութերորդ ճառէն][125]. Առաջին օր բաղարճակերաց – Զյառաջ քան զԲաղարճակերաց օրէն ասէ, զի սովոր էին յերեկօրեայ թուել զօրն: Եւ զայն յիշեալ ըստ այնմ զի յերեկորեայ զենլոց էր գառն Զատկին...[126]*

*-142բ–4ա [Ի քսաներորդ իններորդ ճառէն][127]. Մինչդեռ ուտէին,– ասէ,– առ Յիսուս հաց գոհացաւ եբեկ եւ ասէ. Առէք կերայք այս է մարմին իմ – Բա՛ր է քան ի կուրութիւն էր մարտնչին, եւ խորհրդոցն հաղորդ լեալ, ի նոյն եւ ի նմին եկաց եւ յահագին սեղանոյն վայելեալ չփոխեցաւ...[128](Զեռագիրն առավել ընդարձակ է քան տպ.):*

---

[117] Նույն տեղում, էջ 73:
[118] Նույն տեղում, էջ 73–75:
[119] Նույն տեղում, էջ 76:
[120] Նույն տեղում, էջ 76–81:
[121] Նույն տեղում, էջ 83:
[122] Նույն տեղում, էջ 83–88:
[123] Նույն տեղում, էջ 90:
[124] Նույն տեղում, էջ 90–94:
[125] Նույն տեղում, էջ 97:
[126] Նույն տեղում, էջ 97–101:
[127] Նույն տեղում, էջ 103:
[128] Նույն տեղում, էջ 103–107:

*-144ա–6ա [Յերեսներորդ ճառէն][129]. Յայնժամ գայ ընդ նոսա Յիսուս ի գեօղ մի, որում անունն էր Գէթսամանի: Եւ ասէ. Նստարուք աստ մինչեւ երթայց յաղօթս կացից – Զի սովոր էր, ուրոյն ի նոցանէ, յաղօթս կալ, զի զմեզ խրատեսցէ ունել հանդարտութիւն յաղօթս, եւ կազմեալ անձանց բազում պատրաստութիւն: Առնու մեկուսի զերեսինն...[130]*

*-115ա–7բ [Յերեսներորդ առաջներորդ ճառէն][131]. Եւ ահաւասիկ մի ոմն յայնցանէ, որ ընդ Յիսուսի էին, ձգեաց ձեռն եւ եհան սուր եւ կտրեաց զունկն ծառային – Ո՞վ իցէ «մի ոմն», որ եհատ զունկն: Յոհաննէս ասէ. թէ. Պետրոս էր, քանզի նորա ջերմութեանն էին իրքն, բայց եւ զայն արժան է խնդրէր, թէ վասն էր սուր ունէին ընդ իւրեանս...[132]*

*-147բ–53ա [Յերեսներորդ երկրորդ ճառէն][133]. Յայնժամ թքին ընդ երես նորա եւ կոփեցին զնա – Ընդէ՞ր առնէին զայն, ո՞ւր զի սպանանելոց էին, զինչ պէտք ձաղութեանն էին , զի ուսանիցիս այսու զանառակ բարս նոցա...[134](տպ. համառոտ):*

*-153ա [Յերեսներորդ հինգերորդ ճառէն][135]. Մատեաւ ասէ Յովսէփ եւ խնդրեաց զմարմինն – Այս Յովսէփ զառաջինն ի ծածուկ էր, բայց այժմ մեծ համարձակութիւն համարձակեցաւ յետ մահուն Քրիստոսի...[136]*

*-153ա–4ա [Յերեսներորդ վեցերորդ ճառէն][137]. Ի վաղիւ անդր յետ ուրբաթուն ժողովեցան քահանայապետքն եւ փարիսեցիքն առ Պիղատոս – Ամենայն ուրէք մոլորութիւնն ընդ անձին մտանէ, եւ ակամա լինի ջատագով ճշմարտութեանն: Եւ դու միտ դիր, պարտ էր հաւատարիմ լինել...[138]*

*-154ա–5ա [Յերեսներորդ եւթներորդ ճառէն][139]. Եւ իբրեւ նոքա գնացին ոմանք ի զինուորացն եկին ի քաղաքն եւ պատմեցին զեղեալսն – Վասն այնորիկ զինուորացն եղեւ շարժումն, զի զարհուրեսցին եւ ի նո-*

---

[129] Նույն տեղում, էջ 112:
[130] Նույն տեղում, էջ 112–115:
[131] Նույն տեղում, էջ 116:
[132] Նույն տեղում, էջ 116–120:
[133] Նույն տեղում, էջ 121:
[134] Նույն տեղում, էջ 121–124:
[135] Նույն տեղում, էջ 135:
[136] Նույն տեղում:
[137] Նույն տեղում, էջ 136:
[138] Նույն տեղում, էջ 137–138:
[139] Նույն տեղում, էջ 139:

*ցանէ լինիցի վկայութիւն որպէս եւ եղեւ իսկ, քանզի եւ առանց կարծեաց այնպէս լինէր պատմութիւնն...*[140]

*[Յիշատակարան նախագաղափար օրինակի]*

*-155բ ԶԱրիստակէս վարդապետ եւ զգովեալ աշակերտ նորին զԵփրեմ յիշեսջիք ի Քրիստոս, զի նա՛ աշխատեալ ժողովեաց զբանս Մեկնչացն ի մի, յետ Տեառն Ներսէսի։ Յօրինակէր այս չափ էր յիշատակարան Արիստակիսի. զայն որ կատարեալն էր չգտաք, անմեղադիր լերուք*[141]*։*

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[140] *Նույն տեղում, Գիրք երրորդ, էջ 139–142։*

[141] *Ինչպես տեսնում ենք նախագաղափար հիշատակարանից, միայն սկիզբն է բանաքաղված Ներսես Շնորհալու Մատթէոսի Ավետարանի Մեկնությունից, քանի որ նախագաղափար ձեռագրի գրիչը, հավանական է, ամբողջական տարբերակը չի ունեցել ձեռքի տակ, այնուհետեւ լրացրել է Հովհան Ոսկեբերանի համապատասխան գրքից, բանաքաղելով իրեն անհրաժեշտը, կամ կատարելով ստացողի պահանջը։ Ղազար գրչի համար նախագափար օրինակ է ծառայել ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ 1253 ձեռագիրը, որտեղ էլ՝ 353ա էջում զետեղված է սույն հիշատակարանը (տե՛ս տպ. ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ, հտ. Դ., էջ 747–748)։*